

2024թ. երրորդ եռամսյակի

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

կողմից կատարված աշխատանքների

Հաշվետվություն

# 1. Պարկի տարածքում գիտական հետազոտություններ.

**2024թ. երրորդ եռամսյակում հիդրոկենսաբանի** կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող Վարդենիկ, Ծակքար, Արգիճի և Կարճաղբյուր գետերի տարբեր հատվածների ջրերում 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների քանակը և կոլի-ինդեքսը (աղիքային ցուպիկների խմբի մանրէների քանակը 1լ. ջրում): Զուգահեռ նաև ուսումնասիրվել է ջրում լուծված թթվածնի և օրգանական նյութի պարունակությունը՝ ըստ պերմանգանատային օքսիդացման արժեքի: 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների հարաբերակցության արժեքի հիման վրա որոշվել է գետի ինքնամաքման ինտենսիվությունը:

Մանրէաբանական ցուցանիշների հիման վրա գնահատվել է գետերի ջրերի էկոլոգասանիտարական վիճակը:

Մանրէաբանական ուսումնասիրություններ են իրականացվել նաև Փոքր Սևանի՝ հանգստացողներով առավել ծանրաբեռնված լողափերի (հանրային թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թերակղզու լողափ) ջրերի սանիտարական վիճակի գնահատման համար:

## Գետ Ծակքար

**Ակունք-** գետի հոսքը գլխավորապես ձևավորվում է ստորերկրյա ջրերի հաշվին: Այստեղ են թափվում Ծակքար գյուղի սկզբնամասի ավիամերձ տների ֆեկալ-տնտեսական հոսքաջրերը՝ ենթարկելով այն աղտոտման: Դրանով պայմանավորված՝ դիտակետի ջրերում արձանագրվել է գետի ակունքին ոչ բնորոշ՝ մանրէներով աղտոտվածության համեմատաբար բարձր մակարդակ: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 3100 ԳԱՄ/մլ և 530 ԳԱՄ/մլ (գաղութ առաջացնող միավոր 1մլ ջրում), իսկ կոլի-ինդեքսը՝ 10 հգ.ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքման արժեքը կազմել է 5,8: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9,4 մգO<sub>2</sub>/դմ<sup>3</sup>, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,1 մգO/դմ<sup>3</sup> (աղ.1):

### Աղյուսակ 1.Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Ծակքար գետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հգ ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO <sub>2</sub> /դմ <sup>3</sup> ,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ <sup>3</sup>
	20 °C	37 °C			
Ակունք	3100	530	10	9,4	1,1
Գետաբերան	2400	270	7,2	9,6	3

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության՝ 2018թ. N 09-Ն հրամանի՝ «Դեկրետացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջների» N 2.1.5.001-18 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին որոշման, ընդհանուր կոլիֆորմ բակտերիաների (37°C ջերմաստիճանում աճեցված աղիքային ցուպիկների խմբի մանրէներ)

թվաքանակը չպետք է գերազանցի 500 ԳԱՄ/100մլ արժեքը: Նշված արժեքը ակունքում ՍԹԿ-ն (սահմանային թույլատրելի կոնցենտրացիա) գերազանցել է 2 անգամ:

**Գետաբերան-** գետի այս հատվածի դիտակետի ջրերում՝ ակունքի համեմատ, գրանցվել է մանրէների թվաքանակի նվազում: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը կազմել է 2400 ԳԱՄ/մլ և 270 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 7,2 հգ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 1,7 անգամ: Ակտիվացել է ինքնամաքրման գործընթացը (8,5): Ջրում լուծված թթվածնի պարունակությունը գրեթե չի փոխվել, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը բարձրացել է կազմելով 3մգՕ/դմ<sup>3</sup>:

**Գետ Վարդենիկ**

**Վերին հոսանք-** գետի այս հատվածում 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 1000 ԳԱՄ/մլ և 25 ԳԱՄ/մլ: 20 մլ փորձանմուշում աղիքային ցուպիկ չի հայտնաբերվել: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 40: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9,6 մգՕ<sub>2</sub>/դմ<sup>3</sup>, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,9 մգՕ/դմ<sup>3</sup> (աղ.2):

**Աղյուսակ 2. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Վարդենիկ գետի տարբեր հատվածների ջրերում**

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հգ ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգՕ <sub>2</sub> /դմ <sup>3</sup> ,	Պերմանգանատային օքսիդացում, մգՕ/դմ <sup>3</sup>
	20° C	37° C			
Վերին հոսանք	1000	25	Չի հայտնաբերվել ԳԱՄ	9,6	1,9
Վարդենիկ գյուղի ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի մուտքից մոտ 100մ ներքև	11250	1800	120	9,4	2,5
Գետաբերան	4400	580	-	9,6	2

**Վարդենիկ գյուղի ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի մուտքից մոտ 100մ ներքև-** հոսքաջրերը անարգել թափվելով գետը՝ այն ենթարկում են աղտոտման, ինչի արդյունքում վերին հոսանքի համեմատ՝ արձանագրվել է մանրէների քանակական բարձր արժեքներ: Այսպես 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 11250 ԳԱՄ/մլ և 1800 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 120 հգ. ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 24 անգամ: Նվազել է ինքնամաքրման ինտենսիվությունը (6,2): Դիտակետի ջրերում լուծված թթվածնի պարունակությունը գրեթե չի փոխվել, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը բարձրացել է՝ կազմելով 2,5 մգՕ/դմ<sup>3</sup>:

**Գետաբերան-** ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ գետի ջրի ինքնամաքրման շնորհիվ, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների

քանակը՝ նախորդ դիտակետի համեմատ, համապատասխանաբար նվազել է 2,5 և 3,1 անգամ: Ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը ակտիվացել է (7,6): Լուծված թթվածնի պարունակությունը որոշ չափով բարձրացել է, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը նվազել է՝ կազմելով 2 մգO/դմ<sup>3</sup>:

**Գետ Կարճաղբյուր**

**Վերին հոսանք**- 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 1900 ԳԱՄ/մլ և 260 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 2,6 հգ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն չի գերազանցել: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 7,3: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9 մգO<sub>2</sub>/դմ<sup>3</sup>, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 2,8 մգO/դմ<sup>3</sup> (աղ.3):

**Գետաբերան**- գետը, հոսելով համանուն գյուղի միջով ենթարկվում է աղտոտման ֆեկալ-տնտեսական և գյուղատնտեսական հոսքաջրերով, որի արդյունքում դիտակետի ջրերում՝ վերին հոսանքի համեմատ, արձանագրվել է մանրէների թվաքանակի ավելացում: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 4350 ԳԱՄ/մլ և 410 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 27 հգ.ԳԱՄ/մլ: Վերջինս ՍԹԿ-ն գերազանցել է 5,4 անգամ: Ակտիվացել է ինքնամաքրման գործընթացը (10.6):

**Աղյուսակ 3. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Կարճաղբյուր գետի տարբեր հատվածների ջրերում**

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հգ ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO <sub>2</sub> /դմ <sup>3</sup> ,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ <sup>3</sup>
	20 °C	37 °C			
Վերին հոսանք	1900	260	2,6	9	2,8
Գետաբերան	4350	410	27	8	3

Նվազել է լուծված թթվածնի պարունակությունը (8 մգO<sub>2</sub>/դմ<sup>3</sup>), իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը բարձրացել է՝ 3 մգO/դմ<sup>3</sup>:

**Գետ Արգիճի**

**Վերին հոսանք**- կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ դիտակետի ջրերում 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 1235 ԳԱՄ/մլ և 235 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0,19 հգ.ԳԱՄ/լ, որը չի գերազանցել ՍԹԿ-ն: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է մոտ 5,2: Ինչպես նախորդ տարիներին, գետի մյուս դիտակետերի համեմատ, գրանցվել է պերմանգանատային օքսիդացման բարձր արժեք՝ 4,48 մգO/դմ<sup>3</sup>, ինչը, հավանաբար, պայմանավորվել է գետի այս հատվածում

անասնագուների առկայությամբ, որոնց հոսքաջրերը լցվելով գետ, ավելացնում են օրգանական նյութի պարունակությունը: Լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9,4 մգO<sub>2</sub>/դմ<sup>3</sup> (աղ.4):

**Աղյուսակ 4.Սապրոֆիտ մանրէների թվաքանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Արգիճի գետի տարբեր հատվածների ջրերում**

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ.ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO <sub>2</sub> /դմ <sup>3</sup> ,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ <sup>3</sup>
	20° C	37° C			
Վերին հոսանք	1235	235	0,19	9,4	4,48
Ներքին Գետաշենից ներքև՝ ավտոմայրուղում կամրջի հարևանությամբ	5100	800	100	9	2
Գետաբերան	3450	450	7,2	10,5	2,5

**Ներքին Գետաշեն գյուղից ներքև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ**- գետը՝ հոսելով Մաղինա, Վերին Գետաշեն և Ներքին Գետաշեն գյուղերի տարածքներով, աղտոտվում է ֆեկալ-տնտեսական հոսքաջրերով, որի հետևանքով վերցված փորձանմուշում՝ նախորդ դիտակետի համեմատ, արձանագրվել է հետազոտված մանրէների թվաքանակի ավելացում: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 5100 ԳԱՄ/մլ և 800 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 100 հզ. ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 20 անգամ: Ինքնամաքրման գործընթացը ակտիվացել է՝ կազմելով 6,3: Նվազել է լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը:

**Գետաբերան**- նախորդ դիտակետի համեմատ արձանագրվել է հետազոտված մանրէների թվաքանակի նվազում՝ հատկապես աղիքային ցուպիկների: Այսպես, 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 3400 ԳԱՄ/մլ և 450 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 7,2 հզ. ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ: Ակտիվացել է ինքնամաքրման գործընթացը (7,7)՝ պայմանավորված ջրում լուծված թթվածնի համեմատաբար բարձր արժեքով (10,5 մգO<sub>2</sub>/դմ<sup>3</sup>): Բարձրացել է նաև պերմանգանատային օքսիդացման արժեքը (2.5 մգO/դմ<sup>3</sup>):

Այսպիսով, ուսումնասիրությունների արդյունքներից պարզ է դարձել, որ գետերը, գյուղերի տարածքներով հոսելիս, ենթարկվում են ֆեկալ-տնտեսական հոսքաջրերով ինտենսիվ աղտոտման: Մանրէներով առավել աղտոտված են գյուղերից դուրս հոսող հատվածների և գետաբերանի ջրերը: Սապրոֆիտ մանրէների միջոցով տեղի ունեցող ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը Կարճաղբյուր, Արգիճի և Ծակքար գետերում՝ աղտոտվածության մակարդակի բարձրացմանը զուգահեռ, ակունքից դեպի գետաբերան ակտիվացել է (5,2-8,8), իսկ Վարդենիկում՝ նվազել (40-6,2):

Հետազոտված գետերի գյուղերից դուրս հոսող և գետաբերանի հատվածներում կոլիֆորմ բակտերիաները ռեկրեացիոն նպատակով օգտագործվող ջրերում, ՀՀ առողջապահության նախարարության սահմանած չափաքանակը գերազանցել են 1,4-40 անգամ, իսկ վերին հոսանքների ջրերում՝ բացառությամբ Ծակքար գետի, չեն գերազանցել:

Համաձայն Վ. Դ. Ռոմանենկոյի՝ (Романенко и др.,1990) մակերևույթային ջրերի էկոլոգասանիտարական դասակարգման՝ ըստ կոլի-ինդեքսի արժեքի Վարդենիկ, Արգիճի և Կարճաղբյուր գետերի վերին հոսանքների ջրերը գնահատվել են որպես «չափազանց մաքուր, բավարար մաքուր», իսկ Ծակքարը՝ «թույլ աղտոտված»: Ծակքար գետի գետաբերանի հատվածում ջուրը գնահատվել է որպես «թույլ աղտոտված», Վարդենիկը՝ «չափավոր աղտոտված», իսկ Արգիճին՝ «ուժեղ աղտոտված»:

Ըստ 20°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակի՝ Արգիճի, Ծակքար և Կարճաղբյուր գետերի վերին հոսանքների ջրերը դասվել են «բավարար մաքուր», իսկ Վարդենիկը՝ «միանգամայն մաքուր» ջրերի կարգի: Գետաբերանի հատվածներում Վարդենիկ, Կարճաղբյուր և Արգիճի գետերի ջրերը դասվել են «թույլ աղտոտված», իսկ Ծակքարը՝ «միանգամայն մաքուր» ջրերի կարգի:

Համաձայն Ժ.Պ. Ամբրազենի (Амбразене, 1974) դասակարգման՝ ըստ 37°C ջերմաստիճանում 24ժ տևողությամբ աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակի՝ Վարդենիկ, Արգիճի և Կարճաղբյուր գետերի վերին հոսանքների ջրերը դասվել են «մաքուր», իսկ Ծակքարը՝ «թույլ աղտոտված» ջրերի դասին: Ծակքար գետի գետաբերանի հատվածում ջուրը դասվել է «մաքուր», իսկ Վարդենիկ, Արգիճի և Կարճաղբյուր գետերի գետաբերանի հատվածներում՝ «թույլ աղտոտված» ջրերի դասին:

**Փոքր Սևանի ռեկրեացիոն գոտիների ջրերի սանիտարական վիճակի գնահատումն ըստ ընդհանուր կոլիֆորմ մանրէների թվաքանակի**

Ուսումնասիրությունները իրականացվել են 2024թ. օգոստոսին՝ հանգստացողներով համեմատաբար ծանրաբեռնված հանրային թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թերակղզու լողափերում:

Կատարված հետազոտությունների արդյունքում կոլիֆորմ բակտերիաներ հայտնաբերվել են բոլոր փորձանմուշներում, իսկ կոլի-ինդեքսը փոփոխվել է 250-750 ԳԱՄ/լ (գաղութ առաջացնող միավոր) սահմաններում: Համեմատաբար բարձր արժեք արձանագրվել է թերակղզու լողափում (աղ.1): 2023թ. օգոստոսի համեմատ լողափերի ջրերում արձանագրվել է կոլի-ինդեքսի արժեքի նվազում՝ միջին հաշվով մոտ 1,4 անգամ, ինչը, հավանաբար, պայմանավորված է հանգստացողների քիչ թվով:

**Աղյուսակ 1. 2024թ. օգոստոսին Փոքր Սևանի լողափերի ջրերում գրանցված կոլի-ինդեքսի արժեքները**

Լողափ	Կոլի-ինդեքս, ԳԱՄ/լ
Հանրային թիվ 1	250
Հանրային թիվ 2	250
Հանրային թիվ 3	350
Թերակղզի	750

Այսպիսով, ուսումնասիրված լողափերում գրանցված ընդհանուր կոլիֆորմ բակտերիաների արժեքները չեն գերազանցել ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված նորմերը (500 ԳԱՄ/ 100մլ):

Հետազոտված լողափերի ջրերը՝ համաձայն Ռոմանենկոյի մակերևութային ջրերի էկոլոգասանիտարական դասակարգման, ըստ կոլի-ինդեքսի արժեքների, համապատասխանել են «մաքուր» ( II դաս) ջրերի դասին:

**Գլխավոր ձկնաբան-ձկնաբույծի** կողմից երրորդ եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնի համակեցության էկոլոգիական հետազոտություններ:

Կատարվել են խեցգետնի վերարտադրման, չափատարիքային, սեռական կառուցվածքի, բազմացման ժամանակահատվածի հետազոտություններ:

Խեցգետնաբանական հետազոտություններ են իրականացվել փոքր Սևանի՝ Ծովագարդ, Հայրավանք, Դրախտիկ և մեծ Սևանի՝ Զիլ, Երանոս, Ծովինար համայնքների ջրային տարածքներում:

Ուսումնասիրվել է 798 առանձնյակ, որից վերարտադրման ցուցանիշների գնահատման համար հետազոտվել է 180 հատ էգ խեցգետին:

Սևանա լճում խեցգետնի վերարտադրման ընթացքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձվադրման գործընթացը սկսվել է փետրվարի ակզբին: Լճում խեցգետնի բեղմնավորված ձվերով էգեր հայտնաբերվել են մարտի սկզբին, երբ ջրի ջերմաստիճանը լճի հատակային շերտերում տատանվել է՝ 1,5<sup>0</sup>C -2,0<sup>0</sup>C: Խեցգետնիկների ծնունդը գրանցվել է հունիսի երրորդ տասնօրյակից մինչև հուլիսի առաջին տասնօրյակը, երբ ջրի ջերմաստիճանը գերազանցել է 19,5<sup>0</sup>C: Ձագերի առավելագույն քանակը եղել է 150, հիալինային թելերով մայրական օրգանիզմին դեռևս կապած ձագերի միջին կշիռը կազմել է 11 մգ: Փորձանմուշների հետազոտությունները ցույց են տվել, որ արդյունագործական տարիքի առանձնյակները, որոնց չափերը գերազանցում են 9 սմ-ին մաշկափոխանակությունն իրականացրել են հունիս-սեպտեմբեր ժամանակահատվածում:

Սևանա լճում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ արու խեցգետինների միջին չափը փոքր Սևանում տատանվել է՝ 9,9 - 10,2 սմ, քաշը՝ 24,8 - 28,3 գրամ, մեծ Սևանում՝ 10,0 - 10,2 սմ, քաշը՝ 25,6 - 27,1 գրամ:

Տարիքային խմբերը կազմել են 3-5 տարեկան խեցգետինները:

Ուսումնասիրության արդյունքներից ելնելով կարելի է եզրակացնել, որ վերարտադրման և որսաչափերի ցուցանիշների համաձայն Սևանա լճում խեցգետնի պոպուլյացիան գտնվում է բավարար վիճակում:

**Սիգ-** երրորդ եռամսյակում Սևանա լճում ձկնաբանական հետազոտություններ են իրականացվել մեծ Սևանի՝ Երանոս և փոքր Սևանի՝ թերակղզի, Դրախտիկ համայնքների ջրային տարածքներում, որոնք հանդիսանում են սիգ ձկնատեսակի ինտենսիվ արդյունահանման վայրը: Վերը նշված վայրերից ուսումնասիրվող ժամանակահատվածում լճից որսվել և կենսաբանական վերլուծության է ենթարկվել սիգ՝ 134 առանձնյակ: Որոշվել են ձկների ձևաչափական ցուցանիշները՝ երկարությունը, քաշը, սեռը, հասունացման փուլը, տարիքը և բտվածությունը:

Փոքր Սևանի տարածքում ձկների հիմնական կուտակումները հանդիպել են 15-18 մետր խորություններում, իսկ Մեծ Սևանում հանդիպում են 25-30մ խորություններում, ինչը կարող է պայմանավորված լինել լճի երկու հատվածների միջև խորքային շերտերի ջերմաստիճանային պայմանների տարբերություններով: Ջրային այդ հատվածներից հանված դնովի ցանցերի մեջ եղած ձկների միջին երկարությունը տատանվել է՝ 30,3-30,7 սմ, քաշը՝ 368,8-446,4 գրամ: Բտվածության ցուցանիշը՝  $F = 1,24-1,29$ ,  $K = 1,12-1,16$ :

Սեռական արգասիքները գտնվել են հասունացման 3-րդ փուլում: Հետազոտված ձկները եղել են՝ 1<sup>+</sup>, 2<sup>+</sup>, և 3<sup>+</sup> տարեկան: (փ. Սևան թերակղզի, Դրախտիկ):

Օգոստոս ամսին Մեծ Սևանում փորձանմուշներ են հանդիսացել 42 x 42 մմ. խորշեր ունեցող դնովի ցանցերով որսված (Երանոսի ջրային տարածք) սիգ ձկնատեսակի 42 առանձնյակներ: Հետազոտված ձկների միջին երկարությունը եղել է՝ 32,3 սմ, քաշը՝ 404,8 գրամ: Բովաճութայան միջին գործակիցը՝  $F = 1,24$ ,  $K = 1,11$ : Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման 3-րդ փուլում: Հետազոտված ձկների 33,3% -ը կազմել են արու, 66,7% -ը էգ առանձնյակներ:

Լճի ուսումնասիրվող տարածքներում սիգը սնվել է հիմնականում զոոպլանկտոնով, ճյուղաբեղավոր խեցգետնակերպերով, կողալողերով: Ուսումնասիրվող ժամանակահատվածում ջրի ջերմաստիճանը տատանվել է 18°C - 20°C:

**Կարաս** - 2024թ. երրորդ եռամսյակում Սևանա լճում ուսումնասիրվել է կարասի կենսաբանական վիճակը:

Կարասի պոպուլյացիայի հետազոտման համար փորձանմուշներ ձեռք են բերվել փոքր Սևանի՝ Ծովագյուղ, Ծովազարդ և Մեծ Սևանի՝ Նորատուս համայնքների ջրային տարածքներից, դնովի ցանցերով, որոնց խորշերի մեծությունը տատանվել է 45 x 45 մմ. և 50 x 50 մմ. սահմաններում:

Հուլիս – սեպտեմբեր ժամանակահատվածում հետազոտված առանձնյակները պատկանել են 2<sup>+</sup> - 5<sup>+</sup> տարիքային խմբերի: Փոքր Սևանում կարասի ամառային ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ծովագյուղի ջրային տարածքում այդ ձկնատեսակը հանդիպել է 7-9 մետր խորությունների վրա, իսկ Ծովազարդի ջրային տարածքում՝ 5-7 մետր խորությունների վրա:

Այդ խորություններից որսված կարասի միջին երկարությունը տատանվել են՝ 15,5 սմ – ից – 17,2 սմ, քաշը՝ 141,2 – 181,2 գրամ: Բովաճութայան միջին գործակիցը՝  $F = 3,77 - 3,98$ ,  $K = 3,06 - 3,25$  (փ. Սևան՝ Ծովագյուղ, Ծովազարդ):

Մեծ Սևանում՝ Նորատուսի ջրային տարածքից՝ 5-8 մետր խորություններից որսված կարաս տեսակի ձկների միջին քաշը՝ 193,1 գրամ է, երկարությունը՝ 18,7 սմ: Բովաճութայան միջին գործակիցը՝  $F = 3,42$ ,  $K = 2,75$ : Կարասը որսաբաժնում ներկայացված է եղել 2<sup>+</sup>, 3<sup>+</sup> և 4<sup>+</sup> տարիքային խմբերով:

Հագեցվածության գարնանային ուսումնասիրությունների համեմատ մեծ փոփոխությունների չեն ենթարկվել, ինչը խոսում է եռամսյակի ընթացքում կարասի համեմատաբար կայուն կերային բազայի առկայության մասին: Կարասի կերի հիմնական բաղադրիչ կազմել են դետրիտը, ֆիտոպլանկտոնային օրգանիզմները և զոոբենթոսային օրգանիզմներից՝ բզզան մոծակի թրթուրները:

Ուսումնասիրությունների ժամանակահատվածում ջրի մակերեսային շերտի ջերմաստիճանը տատանվել է 15,7°C – 19,5°C:

Սևանա լճում կարասի պոպուլյացիայի վրա արդյունազորական ծանրաբեռնվածության աճը բերել է պաշարների կրճատմանը, մեծ տարիքային խմբի ձկների քանակը քչացել են, տեղի է ունեցել պոպուլյացիայի երիտասարդացում:

### **Արդյունազորական ձկնորսություն**

2024 թվականի ընթացքում Սևանա լճում արդյունազորական ձկնորսությունը իրականացվում է երկու փուլով՝

#### **1-ին փուլ.**

ՇՄՆ-ի հետ կնքված պայմանագրերով 2024 թվականի **հուլիսի 01-ից մինչև օգոստոսի 31-ը ընկած** ժամանակահատվածում 9 կազմակերպությունների կողմից Սևանա լճում



արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս մուտքի 25 կետերից, որի ընթացքում որսվել է ընդհանուր **85 529** կգ սիգ տեսակի ձուկ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմանագրով 2024 թվականի **հուլիսի 01-ից մինչև օգոստոսի 31-ը** ընկած ժամանակահատվածում որսվել է **50 215** կգ սիգ տեսակի ձուկ:

Սևանա լճում արդյունագործական նպատակով **2024թ.ձկան որսաշրջանը սկսվելուց մինչև օգոստոսի 31-ը** ընկած ժամանակահատվածում 9 կազմակերպությունների կողմից 566 ձկնորսների կողմից մուտքի 25 կետերից, որսվել է ընդհանուր **238180** կգ սիգ տեսակի ձուկ, որը «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմանագրով 317 ձկնորսների կողմից որսվել է **137961** կգ սիգ տեսակի ձուկ:

## **2-րդ փուլ.**

ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 29-ի №1361-Ն որոշման համաձայն սահմանվել է Սևանա լճից սիգի արդյունագործական որսի 422 տոննա չափաքանակ՝ սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածի համար: Համաձայն Կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N1667-Ն որոշման՝ Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական նպատակներով որս իրականացնելու համար, պայմանագիր կնքելու հայտերը ներկայացվել են ս.թ սեպտեմբերի 9-ը ներառյալ: Լիազոր մարմնի և ՍՊԸ-ների ու «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական նպատակներով որս իրականացնելու իրավունքի թույլտվության պայմանագրերը կնքվել են 2024 թվականի սեպտեմբերի 10-ին:

ՇՄՆ-ի հետ կնքված պայմանագրերով 2024 թվականի **սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 30-ը ընկած** ժամանակահատվածում 5 կազմակերպությունների կողմից՝ 593 ձկնորսների միջոցով Սևանա լճում արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս մուտքի 24 կետերից, որի ընթացքում որսվել է ընդհանուր **89 415** կգ սիգ տեսակի ձուկ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմանագրով 467 ձկնորսների կողմից 2024 թվականի **սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 30-ը** ընկած ժամանակահատվածում որսվել է **75 018** կգ սիգ տեսակի ձուկ:

## **Կադաստրի վարում և հողաշինարարություն.**

Հիմք ընդունելով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի մոտ կայացած գործակարգավարական խորհրդակցության №2 արձանագրության հանձնարարականի իրականացվում է ստուգայաց դադարեցված պայմանագրերի տարածքներ՝ փաստացի տիրապետման և գույքով ծանրաբեռնվածության փաստը ստուգելու նպատակով: Ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքվել են 8 նոր պայմանագրեր, 2 համաձայնագրեր՝ վարձավճարի փոփոխության, 8 հողօգտագործողների պայմանագրեր դադարեցվել են, 56 հողօգտագործողների պայմանագրային փաթեթներում կատարվել են տվյալների փոփոխություն: Կատարված փոփոխությունները փոխանցվել են տվյալների բազա:

Հողօգտագործողների կողմից տարբեր խնդրանքներով (ներդրումային ծրագրեր իրականացնելու, հողամասը օտարելու, նոր պայմանագրեր կնքելու, հողամասը ենթավարձակալությամբ տրամադրելու, գույքի բաժանում կատարելու և այլն) ՊՈԱԿ ներկայացրած դիմումները քննարկվել են ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում և դրանց տրվել է համապատասխան ընթացք:

**ՊՈԱԿ-ի հողաշինարարի կողմից՝** Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված 2024թ. հունվարի 18-ին կնքված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N°ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի համաձայն՝ «Սևան» ազգային պարկի Դրախտիկ տեղամասում՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների մաքրման նպատակով Դրախտիկ տեղամասի 5,6,7,8,9,10,11 քառակուսիներում ավարտվել են նշահարման, ծառերի համարակալման և հաշվեգնահատման աշխատանքները:

Արտանիշ տեղամասի 2-րդ պահաբաժնի 12-րդ քառակուսում և 4-րդ պահաբաժնի 15,16,24,27,28,29,30-րդ քառակուսիներում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների մաքրման նպատակով ավարտվել է նշահարման աշխատանքները, ներկայումս ընթանում են ծառերի համարակալման և հաշվեգնահատման աշխատանքներ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2024 թվականի օգոստոսի 23-ի N°198-Լ հրամանի հողաշինարարի մասնակցությամբ Սևանի, Ախթամար, Նորատուս, Այրիվան, Մարտունի, Երանոս, Ծովինար, Վարդենիկ, Փամբակ, Ծովակ, Վարդենիս, Դրախտիկ և Արտանիշ տեղամասերում ուսումնասիրվել և ավարտվել են անտառպաթոլոգիական ուսումնասիրությունները:

ՊՈԱԿ-ի տնօրենի մի շարք հրամանների համաձայն հողաշինարարը մասնակցել է մի շարք գնահատման հայտերի հանրային քննարկումների:

Կազմվել են խոտհունձի, փեթակների տեղադրման, անասունների արածեցման պայմանագրերի համար տեղադիրքի 6 քարտեզներ:

### **Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ.**

Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված 2024թ. հունվարի 18-ին կնքված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N°ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի համաձայն՝ «Սևան» ազգային պարկի Դրախտիկ տեղամասում՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների մաքրման նպատակով Դրախտիկ տեղամասի 5,6,7,8,9,10,11 քառակուսիներում ավարտվել են նշահարման, ծառերի համարակալման և հաշվեգնահատման աշխատանքները: Դրախտիկ տեղամասի 5,6,7,8,9,10,11 քառակուսիներում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների մաքրման աշխատանքներ սկսելու նպատակով դուրս են գրվել N°000012, N°000013 և N°000014 անտառհատման տոմսեր, որոնց սպսվելիք ելքի ընդհանուր ծավալը կազմում է 217,687 խիտ/խմ՝ որից շինափայտ 24,71 խմ:

Արտանիշ տեղամասի 2-րդ պահաբաժնի 12-րդ քառակուսում և 4-րդ պահաբաժնի 15,16,24,27,28,29,30-րդ քառակուսիներում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների մաքրման նպատակով ավարտվել է նշահարման աշխատանքները, ներկայումս ընթանում են ծառերի համարակալման և հաշվեգնահատման աշխատանքներ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից Դրախտիկ տեղամասի 1,2,4,5,6,7-րդ քառակուսիներում իրականացված անտառմաքրման վերաբերյալ ՇՄՆ ներկայացվել է կատարողական ակտ, փայտանյութի հանձնման-ընդունման ակտ և մաքրված տարածքի քարտեզ, որից հետո Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների միջոցառումների փաստագրման և մոնիթորինգի իրականացման

աշխատանքային խումբը մաքրված տարածք է այցելել՝ ԱԹՍ-ով իրականացված օրթոֆոտոնկարահանումների և աշխարհատեղեկատվական համակարգով վերլուծության արդյունքում փաստագրվել է Արտանիշ մասնաճյուղի Դրախտիկ տեղամասի 1,2,4,5,6,7-րդ քառակուսիներում մաքրված 5,5 հա մակերեսով ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածք: Մաքրման արդյունքում պահեստում կուտակվել է 188,87 խմ (չխրտացված), որից 6,07 խմ շինափայտ, 155,8 խմ վառելափայտ և 27 խմ ցախ և ճյուղիկներ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2024 թվականի հունիսի 7-ի հանձնարարականի հիման վրա ավարտվել են Մարտունու տարածքի՝ Երանոս, Մարտունի, Վարդենիկ և Ծովինար տեղամասերում ծառերի համարակալման, հաշվեգնահատման աշխատանքները և ամփոփվել են գլխավոր անտառագետի կողմից, կնքված ծառերի քանակը՝ կազմել է 4865, սպասվելիք ելքի ծավալը՝ 776,529 խիտ/խմ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2024 թվականի օգոստոսի 23-ի №198-Լ հրամանի Սևանի, Ախթամար, Նորատուս, Այրիվան, Մարտունի, Երանոս, Ծովինար, Վարդենիկ, Փամբակ, Ծովակ, Վարդենիս, Դրախտիկ և Արտանիշ տեղամասերում ավարտվել են անտառապաթոլոգիական ուսումնասիրությունները:

Էլեկտրական ցանցերի համակարգի անխափան գործունեությունն անտառուղիներում, անտառների և անտառային հողերի տարածքներում հրդեհավտանգ վիճակն՝ որպես արտակարգ իրավիճակների առաջացման անհետաձգելի և կանխարգելիչ միջոցառում իրականացնելու նպատակով 2024թ. հուլիսի 18-ի համաձայնագրով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից պատվիրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի, Երանոս տեղամասի 2-րդ պահաբաժնի 21,22,23,24 քառակուսիներ, 3-րդ պահաբաժնի 26,29,32 քառակուսիներ, 4-րդ պահաբաժնի 35,38,40 քառակուսիներ («ՀԵՅ» ՓԲԸ-ի Գեղամա մասնաճյուղի Մարտունու էլ. ցանց, Երանոս 6կվՏ էլեկտրահաղորդման օդային գծի մոտ 1կմ հատված) էտման և հատման աշխատանքներ: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի հրամանով դուրս է գրվել №000011, №000012 անտառհատման տոմսերը: Նշված աշխատանքները իրականացվելու նպատակով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը հայտարարել է գնանձման ընթացակարգ որի արդյունքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և «Սանի Լենդ» ՍՊԸ-ի միջև 2024թ. օգոստոսի 16-ին ծառերը կտրելու ծառայությունների մատուցման մասին կնքել է № ՍԱՊ-ԳՀԾԲ-24/11 պայմանագիր: Աշխատանքները ընթացքի մեջ են, որոնք ըստ պայմանագրի (359,74խմ չխտացված ծառերի և թփերի էտման և հատման) նախատեսված է ավարտել մինչև հոկտեմբերի 30-ը:

2024թ-ի մայիս ամսին Մարտունու տեղամասում գտնվող տնկարանում տնկված 18000 հատ բարդի և 2000 հատ ուռի տեսակի տնկիները խնամվում են ՊՈԱԿ-ի սեզոնային բանվորների միջոցով:

**«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղակատվության տրամադրում.**

ՊՈԱԿ-ի գործունեության առավել կարևոր մանրամասների վերաբերյալ սահմանակից համայնքների բնակչությունը և հանրությունը իրազեկվել է ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքէջից:

ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնը կազմակերպել է հետևյալ միջոցառումները՝ «Բնության պահպանության օր» մովտֆիլմի դիտում, «Սողուններ. Օձ» սեմինար-քննարկում, Երիտասարդության միջազգային օր՝ «Արշավ դեպի Սևանա լիճ» արշավ, «Կարմիր գիրք. Հայկական որոր» սեմինար-քննարկում, բնության հատուկ պահպանվող տարածքների միջազգային օրվան նվիրված՝ «ՍԱՊ Արգելավայրեր» քննարկում, «Արևավան» ուսուցողական դասընթաց:

ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնն է այցելել 1283 այցելու, որոնցից 544-ը մասնակցել են վերոնշյալ միջոցառումներին:

## **2. Իրավական ապահովման բաժին.**

ՊՈԱԿ է ստացվել 763 գրություն, որից 168-ը՝ շրջակա միջավայրի նախարարությունից, 595-ը՝ այլ իրավաբանական և ֆիզիկական անձանցից: Նշված գրությունները Գործավարության կարգին համապատասխան ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները պատճենահանվել են և հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու ուղղությամբ: Ելքագրվել է 853 գրություն, որից 86-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով պատրաստվել են տարաբնույթ դիմումներ և գրություններ:

**Մարդկային ռեսուրսների կառավարում.** Կազմվել է 70 անհատական/ներքին իրավական ակտեր, որից՝ 14-ը աշխատանքային պայմանագիրը լուծելու, 1-ը խրախուսելու, 4-ը չվճարվող արձակուրդ տրամադրելու, 25-ը ամենամյա նվազագույն արձակուրդ տրամադրելու, 10-ը աշխատողին գործուղելու, 16-ը այլ ներքին իրավական ակտերի վերաբերյալ:

ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 9 մարդ, աշխատանքից ազատվել է 14 մարդ:

**Իրավաբան.** Պայմանագրերով սահմանված վարձավճարներն ուշացնելու համար 3 ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնց ընդհանուր պարտքը 4984431,52 ՀՀ դրամ է, ներկայացվել են պայմանագրերը միակողմանի վաղաժամկետ լուծման առաջարկներ:

ՀՀ ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում հրապարակվել է 11 ծանուցումներ, որից 10-ը՝ կադաստրային արժեքների փոփոխության, 1-ը՝ պայմանագրերը միակողմանի վաղաժամկետ լուծման վերաբերյալ:

Կազմվել են 63 ծանուցումներ, որից՝ 12-ը կադաստրային արժեքների բարձրացման հետ կապված վարձավճարների փոփոխման, 3-ը՝ մասնավորեցման արդյունքում պարկի տարածքում ձեռք բերված անշարժ գույքով ծանրաբեռնված հողամասի վարձավճար վճարելու վերաբերյալ, 1-ը հանրային լողափի բարեկարգման, կահավորման և սպասարկման պայմանագրից բխող պարտավորությունների կատարման վերաբերյալ, 48-ը՝ նախկինում կայացած մրցույթի արձանագրության հիման վրա պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Կազմվել են շուրջ 70 գրություններ և գրությունների/դիմումների պատասխաններ:

### **ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝**

- 1) 6 էլեկտրոնային հայցադիմում, ընդհանուր՝ 4673926 ՀՀ դրամ հայցազնով, որից 2-ը գումարի բռնագանձման, իսկ 4-ը գումարի բռնագանձման և պայմանագրի լուծման պահանջներով:
- 2) 9 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու և վճռի օրինական ուժ ստանալու փաստը 2-րդ կնիքով հաստատելու մասին:
- 3) 1 քաղաքացիական գործով ապացույց:
- 4) 3 դիմում վեճը սպառելու վերաբերյալ:
- 5) 1 քաղաքացիական գործով առարկություն:

Դատարանի վճռով հոգուտ ՊՈԱԿ-ի բավարարվել են 2 հայցադիմումներ, ընդհանուր՝ 185901 դրամի պահանջով, կարճվել են 3 քաղաքացիական գործերի վարույթներ՝ պատասխանողների կողմից գումարը վճարելու հիմքով:

ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա ՀՀ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարաններում քննվում են 27 քաղաքացիական գործեր, որից 15-ը՝ գումարի բռնագանձման և պայմանագրի լուծման, 1-ը՝ պայմանագրի լուծման, 11-ը՝ գումարի բռնագանձման պահանջներով, ընդհանուր՝ 23 028 761 հայցագնով:

Կազմվել են 62 պայմանագրեր, որից 4-ը՝ խոտհունձի, 1-ը՝ փեթակների տեղադրման, 1-ը՝ անասունների արածեցման, 2-ը՝ պառկելաթախտերի և/կամ աղբարկղերի վարձակալության, 4-ը՝ հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցման, 50-ը՝ հուշանվերների վաճառք իրականացնելու նպատակով տաղավարի տեղադրման:

Իրավաբանը մասնակցել է 7 քաղաքացիական գործերով դատական նիստերի:

### **3. Ֆինանսահաշվապահական բաժին.**

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2024թ հունվարի 18-ին կնքված N ՇՄԼ-ԴՇ-24/03 պայմանագրի՝ պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման և Սևանա լճի ջրածածկ անատառտնկարկների մաքրման ծառայությունների համար 2024 թվականի երրորդ եռամսյակում ՊՈԱԿ-ին դրամաշնորհ չի տրամադրվել, սակայն նախորդ հաշվետու ժամանակաշրջանում ՊՈԱԿ-ի կողմից դրամաշնորհի շրջանակներում փաստացի չի ծախսվել 30,418.5 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ): Հաշվի առնելով վերոգրյալը, դրամաշնորհի շրջանակներում 6,670.7 հազար ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ) ծախսվել է Սևանա լճի ջրածածկման ենթակա անտառտնկարկների մաքրման աշխատանքների վրա, իսկ մնացած 23,747.8 հազար ՀՀ դրամը ուղղվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների վարձատրությանը:

**Գանձումներ.** Պարբերաբար վարձակալները հեռախոսազանգով տեղեկացվել են իրենց վարձավճարների մասին, կազմվել են շուրջ 335 ծանուցումներ՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության և/կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերով նախատեսված վարձավճարների վերաբերյալ, որի արդյունքում հողի վարձավճարներից մուտքը կազմել է 76,844.6 հազար ՀՀ դրամ:

**Գնումներ.** ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել են 5 ընթացակարգ, որից՝ 3-ը մեկ անձ, 2-ը՝ գնանշման հարցում: Կազմակերպված ընթացակարգերի արդյունքում կնքվել են 4 պայմանագրեր:

### **4.Տնտեսական սպասարկման բաժին.**

Ստորաբաժանումներին տրամադրվել է դիզելային վառելիք, բենզին, գազ, տնտեսական ապրանքներ և գրենական ապրանքներ:

Իրականացվել է շենք-շինությունների և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:

Իրականացվել է ավտոտրանսպորտի աշխատանքի, վառելիքի և քայուղերի շարժի հաշվառում:

Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:

Տրանսպորտային միջոցների մասին կազմվել են թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել է համապատասխան գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:

**«Սևան» ազգային պարկ»  
ՊՈԱԿ-ի տնօրեն**

\_\_\_\_\_ **Կ. Մնացականյան**  
/ստորագրություն/